ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՆԱՎԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մենուա Սողոմոնյան

Հոդվածում ներկայացված են Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի նավթային քաղաքականության էությունը, սկզբունքները և հատկապես նավթային շահերի իրացման ճանապարհին ծագած խնդիրները: Առավելապես ուշադրության են արժանանում Ադրբեջանի հետ կապված խնդիրները՝ այս երկրի՝ նավթային մեծ պաշարների տիրապետելու և, հետևապես, նավթային քաղաքականության հարցում առանցքային նշանակություն ունենալու պատճառով:

1. Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի նավթային շահերի ձևավորումը, նավթային քաղաքականության նպատակն ու սկզբունքները

ԽՍՀՄ փլուզմամբ Հարավային Կովկասում առաջացած աշխարհաքաղաքական վակուումը և տարածաշրջանի պետությունների տնտեսական կապերի խզումը Ռուսաստանի ու նախկին միութենական երկրների հետ՝ ԱՄՆ-ին, եվրոպական և ասիական մի շարք զարգացած պետությունների, ինչպես նաև տարածաշրջանային հարևաններ Թուրքիային և Իրանին դրդեցին ակտիվորեն ներգրավվել Հարավային Կովկասում ընթացող քաղաքական և տնտեսական գործընթացներում: Հասկանալի է, որ այս գործընթացներում ներգրավման առումով յուրաքանչյուր դերակատար սահմանել էր իր նպատակները և քայլեր էր ձեռնարկում՝ լուծելու իր նպատակներից ածանցվող խնդիրները: Հարկ է նշել, որ այդ դերակատարների հարավկովկասյան քաղաքականության առաջնահերթություններից էր կասպյան նավթի արդյունահանումն ու տեղափոխումը: Թեև կասպյան նավթի պաշարների վերաբերյալ տարբեր աղբյուրներ տարբեր գնահատականներ են տալիս[1], այդուհան-

[1] Օրինակ՝ բրիտանական «Բրիթիշ Փեթրոլեում» նավթային ընկերության հեղինակավոր փորձագետների գնահատմամբ, կասպյան նավթի պաշարները կազմում են մոտ 30 մլրդ տոննա, սակայն դրանք կենտրոնացած են հիմնականում ավազանի հյուսիսարևելյան մասում (Ռուսաստան և Ղազախստան) [1, c. 103]:

դերձ, անհերքելի էր, որ նոր նավթառատ շրջան էր բացվում, և ԽՍՀՄ փլուզմամբ լայն հնարավորություններ էին ստեղծվում աշխարհի խոշորագույն նավթային ընկերությունների համար՝ այդ շրջանում գործունեություն ծավալելու առումով[1]: Այս առնչությամբ առաջնահերթ նշանակություն էր տրվում Ադրբեջանին նախ՝ նավթային հարուստ պաշարների, երկրորդ՝ աշխարհագրական դիրքի առումով (կենտրոնաասիական նավթի և գազի տեղափոխման իմաստով): Ինչ վերաբերում է հենց Ադրբեջանի նավթային պաշարների քանակությանը, ապա տեղեկությունները հակասական են: Արևմտյան որոշ փորձագետների կարծիքով՝ Ադրբեջանի արդեն հետազոտված նավթային ռեսուրսները չեն գերազանցում 0,8 մլրդ տոննան [3-5]: Մինչդեռ ադրբեջանցի մասնագետներն իրենց երկրի նավթային պաշարները գնահատում են մինչև 10 մլրդ տոննա, իսկ ռուս մասնագետները՝ կրկնակի քիչ [1]. իսկ ԱՄՆ Էներգիայի տեղեկատվության վարչության վերջին տվյալների համաձայն՝ Ադրբեջանի նավթային պաշարները կազմում են 7 մլրդ բարել (քիչ պակաս, քան 1 մլրդ տոննա) [6]: Նավթի պաշարների շուրջ այս տարակարծության հիմքում երկու պատճառներ են ընկած. առաջին՝ քաղաքական նկատառումներից ելնելով՝ հաճախ գերագնահատվել է ադրբեջանական նավթի քանակությունը, երկրորդ՝ Կասպիցի կարգավիճակի չհստակեցված լինելը կասպյան երկրների միջև այս կամ այն հանքավայրի պատկանելության շուրջ վիճաբանությունների տեղիք է տալիս[2]: Որքա՞ն նավթ է արդյունահանվել Կասպիցի ադրբեջանական հատվածից խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում. հարցի առնչությամբ ռուսաստանցի գիտնականներից ոմանք հնարավոր են համարում, որ Կասպիցի ընդերքը դատարկված լինի խորհրդային տարիներին, ինչն էլ դրդել էր ԽՍՀՄ ղեկավարությանը՝ նավթարդյունահանումը Բաքվից տեղափոխել Արևմտյան Սիբիր, չնայած սիբիրյան նավթի համեմատաբար ցածր որակին և տեղափոխման մեծ ծախսերին [2, c. 138]: Որպես ապացույց է բերվում նաև այն համեմատությունը, որ եթե 1970թ. դրությամբ Ադրբեջանի ընդերքից արդյունահանվում էր տարեկան 20,2 մլն տոննա նավթ, ապա 1990թ.՝ ընդամենը 12,5 մլն տոննա [2, c. 139]: Խորհրդային շրջանում Կասպիցի ադրբեջանական հատվածից նավթի մեծ քանակի արդյունահանման փաստը չբացառելով՝ այնուամենայնիվ այնտեղ նավթի դեռևս զգալի քանակության առկայությունը չարժե հարցականի տակ դնել առնվազն այն պատճառով, որ Բրիտա-

[1] Ինչպես ժամանակին հայտարարել էր ԱՄՆ պետքարտուղար Ջ.Բեյքերը, «կասպյան նավթը կարող է ունենալ նույնքան նշանակություն ինդուստրիալ աշխարհի համար, որքան ունի այսօր Պարսից ծոցի նավթը» [2, c. 43]:

[2] Օրինակ՝ Թուրքմենստանին հաջողվեց կանխել Քյափազ նավթահանքի (թուրքմենական տարբերակով՝ Սերդար) շահագործումը, որն Ադրբեջանը համարում էր իրենը և որի շուրջ բանակցություններ էր վարել արտասահմանյան նավթային ընկերությունների հետ: Թուրքմենստանը հավակնում էր նաև «Դարի գործարքում» ընդգրկված Ազերի և Չրաղ նավթահանքերի նկատմամբ [1, c. 104]:

նիայի պես պրագմատիկ դիվանագիտական ավանդույթներ ունեցող պետությունը չէր կարող իր նավթային ընկերություններին խրախուսել՝ գնալու ոչ շահութաբեր, զուտ քաղաքական նկատառումներով հիմնավորված գործարքների: Այն էլ այն պայմաններում, երբ միայն «Դարի գործարքով» նավթարդյունահանման ոլորտում ներդրումների ($7,4 մլրդ) մոտ 20-ը (մոտ $1,5 մլրդ) ստանձնել են բրիտանական «Բրիթիշ Փեթրոլեում» և «Ռեմքո Էներջի» ընկերությունները (համապատասխանաբար 17,127% և 2,08%), չհաշված հետագա տարիների միլիարդավոր ներդրումներն ինչպես նավթի արդյունահանման, այնպես էլ արտահանման բնագավառում (հարկ է նշել, որ «Բրիթիշ Փեթրոլեումը» Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի գործարկող կազմակերպությունն է) [7]:

Ադրբեջանի նավթային երկրորդ բումը տեղի ունեցավ 1989-90թթ.: Այն կապված էր բրիտանական նավթային ընկերություններից մեկի՝ «Ռեմքո Էներջիի» տնօրեն Սթիվ Ռեմփի անվան հետ, որը, 1989թ. մայիսին ժամանելով Բաքու, նավթահանքերի հետազոտության թույլտվության շուրջ բանակցություններ վարելով Ադրբեջանի իշխանությունների հետ և որոշակի հետազոտական աշխատանքներ կատարելուց հետո հայտարարում է Ադրբեջանի ընդերքում գտնվող նավթի զգալի պաշարների մասին: Ադրբեջանի իշխանությունները, գիտակցելով նավթի արդյունահանման ոլորտում արևմտյան ընկերությունների ֆինանսական և տեխնոլոգիական ներդրումների անհրաժեշտությունը (Ադրբեջանը բնավ ի վիճակի չէր սեփական ուժերով սկսել նավթի լայնամասշտաբ արդյունահանման գործընթացը), Սթիվ Ռեմփին հորդորում են միջնորդել արևմտյան խոշոր ընկերությունների առջև՝ այցելել Ադրբեջան և ներդրումներ կատարել նավթարդյունահանման ոլորտում: 1990թ. օգոստոսին «Ռեմքո Էներջի» և Ադրբեջանի պետական «Կասպմորնեֆտեգազ» ընկերությունների միջև կայացվում է համաձայնություն, որի արդյունքում «Ռեմքոյի» ղեկավարությունը սկսում է միջնորդական աշխատանքներն արևմտյան նավթային ընկերությունների հետ՝ առաջին հերթին համագործակցության հրավիրելով հանրահայտ «Բրիթիշ Փեթրոլեում» ընկերությանը [8]: Այս իրողություններից հետո աշխարհի մի շարք խոշոր նավթային ընկերությունների աշխատակիցներ շտապեցին Ադրբեջան՝ հետազոտական աշխատանքներ սկսելու և նավթի արդյունահանման բնագավառում համագործակցության եզրեր ձեռք բերելու համար: Արդեն 1991թ. սեպտեմբերին «Բրիթիշ Փեթրոլեում» (Մեծ Բրիտանիա), «Ամոքո» (ԱՄՆ), «Ստատոյլ» (Նորվեգիա), «Ռեմքո Էներջի» (Մեծ Բրիտանիա), «Յունոքալ» (ԱՄՆ) և «ՄըքԴերմոթ Ինթերնեյշնըլ» (ԱՄՆ) ընկերությունների միջև ստորագրվում է «Փոխադարձ շահերի գոտի» *(Area of Mutual Interests-AMI)* պայմանագիրը, որը նախատեսում էր համատեղ գործունեություն ադրբեջա-

նական Ազերի նավթահանքի հետազոտական և այլ տեխնիկական աշխատանքների շուրջ [9]: Այս գործընթացն էլ դրեց համաշխարհային խոշոր նավթային ընկերությունների հայտնի՝ «Ադրբեջանի միջազգային գործարկման ընկերություն» (ԱՄԳԸ) *(AIOC - Azerbaijan International Operating Company)* կոնսորցիումի ստեղծման հիմքերը:

«Ռեմքո Էներջին» 1992թ. կեսերին հայտարարեց, որ ադրբեջանական նոր չորս հանքահորերից՝ Ազերի, Չրաղ, Գյունեշլի և Քյափազ, համապատասխան ֆինանսական, տեխնիկական և մասնագիտական ռեսուրսների ներդրման արդյունքում կարելի է արդյունահանել օրական մոտ 700 հազար բարել (մոտ 96 հազ. տոննա) նավթ, իսկ 10-15 տարի հետո՝ մոտ 1 մլն բարել (մոտ 137 հազ. տոննա) [8]:

Բրիտանական նավթային ընկերությունների ակտիվ ներգրավումն ադրբեջանական նավթահանքերի շահագործման ոլորտում և նավթի արդյունահանման և հետագա տեղափոխման պահանջը Մեծ Բրիտանիայի իշխանություններին դրդեցին վարել ակտիվ քաղաքականություն Հարավային Կովկասում:

Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի նավթային քաղաքականությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի. մինչև 1990-ականների կեսը և դրանից հետո: Նման պայմանական բաժանման հիմքում ընկած են ժամանակահատվածների առանձնահատկությունները՝ պայմանավորված բրիտանական նավթային քաղաքական խնդիրների էությամբ, տարածաշրջանի ռազմաքաղաքական և Ադրբեջանի ներքաղաքական իրադրությունը բնորոշող իրադարձությունների և զարգացումների առումով:

1990-ականների առաջին կեսին Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի քաղաքականության առաջնահերթ նպատակն իր նավթային ընկերությունների ամուր դիրքերի հաստատումն էր ադրբեջանական նավթահանքերի շահագործման ոլորտում: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, կարելի է ասել, որ Բրիտանիան ջանում էր իր ձեռքում պահել ադրբեջանական նավթի արդյունահանման և արտահանման գործընթացի վերահսկման բանալին: Նավթը այն միակ լուրջ գործոնն էր, որ պայմանավորում էր Մեծ Բրիտանիայի ակտիվ ներգրավվածությունն իր քաղաքական նպատակներից բխող խնդիրներում, որոնք էին.

1. աջակցել Ադրբեջանի (ինչպես նաև Հայաստանի և Վրաստանի) անկախության կայացմանը (քանզի անկախությունն այդ շրջանում հատկապես ընկալվում էր որպես անկախություն Ռուսաստանից), ուստի և հակազդել ադրբեջանական նավթահանքերի շահագործման, նաև նավթի տեղափոխման բնագավառում Ռուսաստանի մենաշնորհային

դիրքերի ձեռքբերմանն ուղղված քաղաքականությանը,
2. օժանդակել հարավկովկասյան հանրապետություններում ներքին կայունության հաստատմանն ու պահպանմանը,
3. աջակցել այդ երկրներում ժողովրդավարական վարչակարգի հաստատմանը,
4. աջակցել ընդհանուր անվտանգության և կայուն խաղաղության հաստատմանը ողջ հարավկովկասյան տարածաշրջանում:

Թեև 20-րդ դարի վերջին տասնամյակի բրիտանական արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթությունը համարվել է հետսառըպատերազմյան Եվրոպայի վերակերտումն ու կայունության հաստատումն այդտեղ, այնուամենայնիվ, Հարավային Կովկասի կտրվածքով այս դրույթի իրագործումը, մանավանդ 1990-ականների առաջին կեսին, կարծում ենք, ոչ թե նպատակ էր, այլ նպատակից ածանցվող խնդիր [10]: Նման դրույթի իրագործումը որպես նպատակ կարող էր սահմանել հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի միակ գերտերությունը հանդիսացող ԱՄՆ-ը, իսկ Բրիտանիայի դերն այս հարցում կարող էր լինել խաղաղության և կայունության գործընթացին աջակցության ցուցաբերումը, որը լուրջ քայլ էր իր նավթային շահերի սպասարկման առումով:

1990-ականների կեսերից Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի նավթային քաղաքական նպատակը որոշակիորեն վերափոխվեց: Ադրբեջանական նավթահանքերի շահագործման ոլորտում հիմնավորվելուց հետո (ինչին կանդրադառնանք ստորև), առաջին պլան մղվեցին հաստատված ամուր դիրքերի պահպանումը և նավթի՝ ծրագրված ծավալներով արդյունահանման և տեղափոխման գործընթացի անվտանգությունը: Պետք է նշել, որ բրիտանական նավթային քաղաքականության նպատակից ածանցվող խնդիրները հիմնականում շարունակեցին մնալ նույնը՝ լոկ որոշ ոճային փոփոխությունների ենթարկվելով:

Նշենք Հարավային Կովկասում բրիտանական նավթային քաղաքականության հիմնական սկզբունքները.
1. Այդ քաղաքականության իրականացման ժամանակ հիմնվել ԱՄՆ-ի հետ «հատուկ հարաբերությունների» սկզբունքի վրա: Այս եզրակացությանն ենք հանգել վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված բրիտանական քաղաքականությունն ուսումնասիրելով: ԱՄՆ-Մեծ Բրիտանիա «հատուկ հարաբերությունների» սկզբունքը՝ սկսած 1990-ականներից, որոշակիորեն վերափոխվեց. խոսքն, ըստ երևույթին, ԱՄՆ-ի և նրա մերձավորագույն դաշնակիցների (առաջին հերթին՝ Բրիտանիայի)՝ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի առաջ

քաշած նոր մարտահրավերների դիմակայմանն ուղղված ակտիվ և սերտ համագործակցության մասին է[1]: Այսպես, Հարավային Կովկասում բրիտանա-ամերիկյան «հատուկ հարաբերությունների պրոյեկցիան» արտահայտվել և արտահայտվում է կասպյան նավթի արդյունահանման և տեղափոխման հարցից բխող վերոնշյալ խնդիրների լուծմամբ: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ Հարավային Կովկասում բրիտանա-ամերիկյան «հատուկ հարաբերությունների» պրոյեկցիան դեռևս չի նշանակում, թե գոյություն չունի մրցակցություն բրիտանական և ամերիկյան նավթային ընկերությունների միջև:

2. Հնարավորինս ներդաշնակել Հարավային Կովկասում բրիտանական պետական քաղաքականությունը նավթային ընկերությունների տնտեսական գործունեության հետ: Ինչպես կասպյան, այնպես էլ այլ նավթառատ շրջաններից նավթի արդյունահանման և արտահանման խնդիրները երկու պրիզմայով են դիտարկվում՝ պետական նավթային քաղաքականության և նավթային ընկերությունների գործունեության: «Նավթային խաղի» ուսումնասիրությամբ զբաղվող երկու՝ «օյլերների» և «գեյմերների» դպրոցների ներկայացուցիչները շահեկան վիճակ են համարում նշված երևույթների ճիշտ համադրումը [12, pp. 51-59]: Հաճախ նույն երկրի պետական քաղաքականությունը հակասության մեջ է մտնում նավթային ընկերության գործունեության հետ[2]: Մեծ Բրիտանիան այս առումով բավական շահեկան վիճակում հայտնվեց՝ ճիշտ համադրելով իր պետական քաղաքականությունը նավթային ընկերությունների գործունեության հետ[3]: Ընդհանրապես, Մեծ Բրիտանիայում արտաքին քաղաքականությունը կերտվում է տնտեսական շահերի հիման վրա, այլ ոչ թե տնտեսական գործարքներն իրականացվում են՝ քաղաքական նկատառումներից ելնելով: Երկկողմ հարաբերությունների զարգացումը Բրիտանիայի պարագայում խթանվում է ոչ թե վերևից ներքև (կառավարությունից գործարար շրջանակներ), այլ ճիշտ հակառակը: Արտաքին քաղաքական այս գիծը հատկապես ընդգծված բնույթ ուներ բրիտանացի պահպա-

[1] Այս երևույթն արևմտյան քաղաքագետներն այլ կերպ անվանում են «Անգլոսաքսոնական գլոբալիզացիա», որի հիմնական արժեքները ձևակերպվեցին ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի իշխանության տարիներին [11, c. 47]:

[2] Հենց ադրբեջանական նավթի հետ կապված նման սցենարի ականատես ենք լինում՝ դիտարկելով Ռուսաստանի օրինակը, որն ընդհուպ մինչև 1994թ. փաստորեն մեկուսացված մնաց ադրբեջանական նավթի արդյունահանման գործընթացից՝ ի թիվս այլ պատճառների նաև շահարկելով Կասպիցի կարգավիճակի հարցը [13, p. 37]:

[3] Այս առնչությամբ 1994թ. նոյեմբերի 9-ին Մեծ Բրիտանիայի փոխարտգործնախարարի տեղակալ Ռոջեր Բոուները ՀՀ ԳԽ պատգամավորների հետ հանդիպմանն ասել է, որ Բաքվում բրիտանական դեսպանությունը միշտ կպաշտպանի իր ընկերությունների շահերը, որոնք երբեք քաղաքականությամբ չեն զբաղվել և չեն ներկայացնում երկրի արտաքին քաղաքականությունը [14]:

նողականների մոտեցումներում, ինչի մասին են վկայում 1995թ. մարտին կայացած «Բրիտանիան աշխարհում» գիտաժողովի նյութերը, տրանսատլանտյան, ազատ շուկայական գոտու վերաբերյալ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Մալքոլմ Ռիֆքինդի հայտարարությունները, ինչպես նաև վերջինիս ելույթը Լոնդոնի առևտրաարդյունաբերական պալատում (1995թ.) [14, էջ 152-153]:

2. Հարավկովկասյան տարածաշրջանում բրիտանական նավթային քաղաքականության խնդիրները

Ռուսական ազդեցության խնդիրը. Հարավկովկասյան հանրապետությունների և առաջին հերթին Ադրբեջանի անկախության կայացումը մեծ նշանակություն ուներ Մեծ Բրիտանիայի նավթային շահերի տեսանկյունից: Ռուսաստանը լուրջ հայտ էր ներկայացնում ադրբեջանական նավթի արդյունահանման և արտահանման գործընթացը միանձնյա վերահսկելու իմաստով: Բրիտանական «Սիմոն Ռոբերտսոն» հետազոտական խմբի կողմից արևմտյան նավթային ընկերությունների շրջանում 1990-92թթ. կանոնավորապես անցկացվող հարցումների արդյունքների համաձայն (հարցմանը մասնակցել է 58 ընկերություն)՝ 1990թ. տեսության մեջ նավթի և գազի հատվածում ներդրումների տեսակետից առավել գրավիչ երկրների ցանկում ԽՍՀՄ-ը զբաղեցնում էր 10-րդ տեղը, իսկ 1991-92թթ. տեսության մեջ ԱՊՀ-ն արդեն զբաղեցնում էր 2-րդ տեղը Ինդոնեզիայից հետո [15]: Ադրբեջանում Ազգային ճակատի իշխանության ժամանակահատվածը (1992թ. մարտ - 1993թ. հունիս) լայն հնարավորություն էր ընձեռում բրիտանական, ինչպես նաև արևմտյան այլ նավթային ընկերություններին՝ ձեռնամուխ լինել ադրբեջանական նավթահանքերի շահագործմանը: Էլչիբեյի վարչակազմի՝ Ռուսաստանից հեռանալու արտաքին քաղաքական կուրսը դյուրացնում էր այս խնդրի լուծումը նավթային ընկերությունների համար: Գործընթացի ծավալմանը նպաստում էր բրիտանա-ադրբեջանական երկկողմ քաղաքական հարաբերությունների զարգացումն ու խորացումը: 1992թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ մի կողմից՝ «Բրիթիշ Փեթրոլեում» և նորվեգական «Ստատոյլ» ընկերությունների, մյուս կողմից՝ Ադրբեջանի կառավարության միջև Չրաղ և Շահդենիզ հանքավայրերում հետազոտական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ համաձայնագրի ստորագրման արարողությունը, որին իր մասնակցությունը բերեց Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Մարգրեթ Թեթչերը [16, c. 98]: 1992թ. հոկտեմբերի սկզբին Բաքվում հիմնվեց «Բրիթիշ Փեթրոլեում»-ի գրասենյակը: 1992թ. նոյեմբերի 9-ին Ադրբեջանի պետական նավթային ընկերության

(ԱՊՆԸ) և արտասահմանյան նավթային ընկերությունների միջև կայացված համաձայնությունների արդյունքում ձևավորվեցին աշխատանքային խմբեր՝ ուսումնասիրելու, ծրագրելու և համակարգելու նավթի արդյունահանման, ապա և արտահանման աշխատանքները, ստեղծելու դրանց իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները [9]: 1993թ. հունիսի սկզբին տեղի ունեցավ Ազերի, Չրաղ և Գյունեշլի նավթահանքերի շահագործման վերաբերյալ գործարքի նախաստորագրումը ԱՊՆԸ-ի և օտարերկրյա նավթային ընկերությունների միջև, ինչը, սակայն, չկենսագործվեց հունիսի 18-ին տեղի ունեցած պետական հեղաշրջման պատճառով [9]: Էլչիբեյի վարչակազմին ավելի շահագրգռելու նպատակով «Բրիթիշ Փեթրոլեումը» և մյուս խոշոր նավթային ընկերությունները, նախքան 1993թ. հունիսին նշված գործարքի կնքումը, Ադրբեջանի կառավարությանը բոնուսի տեսքով հատկացրել էին $70 մլն [15]:

Ադրբեջանում իշխանությունը Հեյդար Ալիևի ձեռքն անցնելուց հետո բրիտանական իշխանությունների համար լուրջ խնդիրներ ծագեցին՝ կապված Ռուսաստանի՝ ադրբեջանական նավթի արդյունահանման, հետագայում նաև արտահանման գործընթացի վերահսկմանն ուղղված գործունեությանը դիմակայելու հետ: Այդ խնդիրները կապված էին հետևյալ երկու հանգամանքների հետ.

1. 1993թ. կեսերից Ռուսաստանն սկսեց վճռական ակտիվություն ցուցաբերել հարավկովկասյան քաղաքական և տնտեսական գործընթացներում: Այս մասին բարձրաձայն հայտարարելով՝ ՌԴ արտգործնախարար Անդրեյ Կոզիրևը նշել է, որ Հարավային Կովկասը Ռուսաստանի «կենսական շահերի գոտին է», և եթե վերջինս կորցնի իր դիրքերն այստեղ, այլ ուժեր կգրավեն նրա տեղը, իսկ դա անխուսափելիորեն կհանգեցնի Հյուսիսային Կովկասի անջատմանը [17]:
2. Ադրբեջանի փաստացի ղեկավար (1993թ. հոկտեմբերից նաև դե-յուրե) Հ.Ալիևը, ելնելով տարբեր քաղաքական նկատառումներից և առաջին հերթին Ղարաբաղյան հարցում Ռուսաստանի ռազմական և քաղաքական աջակցությունն ապահովելու ակնկալիքներից, բռնեց Ռուսաստանի հետ մերձեցման ուղին: Մինչև 1994թ. սկիզբը շարունակված այս քաղաքական գիծը, որն իր արտահայտությունն ստացավ Ադրբեջանի՝ ԱՊՀ-ին անդամակցությամբ, Ռուսաստանի՝ նավթային գործարքներին մասնակցությամբ (1993թ. հոկտեմբերին ռուսական «Լուկոյլ» ընկերությունը 10% բաժնեմաս ստացավ Ազերի-Չրաղ-Գյունեշլի մերձափնյա նավթահանքերի մշակման ծրագրում ԱՊՆԸ բաժնեմասից), բացասական ազդեցություն ունեցավ բրիտանական նավ-

թային ընկերությունների՝ Ադրբեջանում գործունեության ծավալման, ինչպես նաև բրիտանա-ադրբեջանական հարաբերությունների վրա[1]: Փաստորեն, 1993թ. հունիսի վերջերից մինչև դեկտեմբեր բանակցությունները ԱՊՆԸ-ի և արտասահմանյան նավթային ընկերությունների միջև ընդհատված էին: Սակայն 1993թ. դեկտեմբերի 15-ից ադրբեջանական կողմից վերսկսված լայնածավալ ռազմական գործողությունների ձախողումը (1994թ. փետրվարի 18-ի դրությամբ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը լիովին ազատագրել էին Քարվաճառի շրջանն ազերիներից [19, c. 145]) ստիպեց Հ. Ալիևին՝ տեղաշարժ կատարել արտաքին քաղաքականության մեջ՝ հեռանալով Ռուսաստանից և մոտենալով Թուրքիային ու Արևմուտքին: Այդ մասին է վկայում մասնավորապես 1994թ. փետրվարին Անկարա և Լոնդոն, իսկ մարտին՝ Փարիզ Ալիևի կատարած այցերի վերլուծությունը, ինչպես նաև 1994թ. փետրվարի 18-ին Մոսկվայում ՀՀ և Ադրբեջանի պաշտպանության նախարարների, ԼՂՀ պաշտպանության բանակի ներկայացուցչի կողմից ստորագրված հրադադարի համաձայնության չկատարումը: Բրիտանական իշխանություններն աջակցեցին այս տեղաշարժին՝ միաժամանակ ապահովելով «Բրիթիշ Փեթրոլեումի» հաստատուն դիրքերն ադրբեջանական նավթահանքերի շահագործման ոլորտում: Այսպես, 1994թ. փետրվարի 22-26-ը Լոնդոն պաշտոնական այց կատարած Հ.Ալիևը բրիտանական կողմի հետ ստորագրեց մի ամբողջ շարք քաղաքական և տնտեսական բնույթի փաստաթղթեր [20, 26.02.1994]: Դրանցից առավել կարևորները երկու պետությունների միջև բարեկամության և համագործակցության հռչակագիրը և Ադրբեջանում «Բրիթիշ Փեթրոլեումի» գործունեության վերաբերյալ համաձայնագիրն էին: Եվ թեև «Լուկոյլ» ընկերությունը դուրս չմղվեց ադրբեջանական նավթահանքերի շահագործման գործընթացից (այն իր բաժնեմասը վաճառեց հետագայում՝ 2002թ. ճապոնական «Ինպեքս» կորպորացիային, այդուհանդերձ, բրիտանական նավթային ընկերությունների համար այլևս չեզոքացված կարելի էր համարել ռուսական վտանգը [21]): Ի դեպ, բրիտանական և ամերիկյան ստրատեգների կարծիքով՝ Ադրբեջանի նավթի արդյունահանման և արտահանման ոլորտներում Ռուսաստանին կարելի է վերապահել «համեստ գործընկերոջ» դեր, այլ ոչ ծանրակշիռ դերակատարություն [22, p. 44]:

[1] Նշված ժամանակահատվածում բրիտանա-ադրբեջանական հարաբերություններում դադարի մասին իմանում ենք 1993թ. հոկտեմբերի 11-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի պետնախարար (փոխնախարարի կարգավիճակ) Դուգլաս Հոգի և ՀՀ փոխարտգործնախարար Ժ.Լիպարիտյանի, ՀՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Դ.Վարդանյանի և ԼՂՀ ԱԳ նախարարության խորհրդական Մ.Սարգսյանի միջև Երևանում կայացած զրույցից [18, էջ 193]:

Մեծ Բրիտանիան, ինչպես և Ադրբեջանում նավթային հետաքրքրություններ ունեցող այլ պետություններ ռուսական ազդեցությանը դիմակայում էին նաև Կասպիցի իրավական ռեժիմի վերաբերյալ ռուս-ադրբեջանական առճակատման հարցում նախապատվությունը ադրբեջանական «ազգային-սեկտորային բաժանման» տեսակետին տալով [23, c. 22-24]: Ռուսաստանի արտգործնախարարությունը 1994թ. ապրիլի 28-ին դեմարշ ներկայացրեց պաշտոնական Լոնդոնին՝ հայտարարելով, որ մինչև Կասպիցի կարգավիճակի հստակեցումը, Կասպիցի նկատմամբ միակողմանի ձեռնարկումները, առանց ՌԴ համաձայնության, չեն ճանաչվի Մոսկվայի կողմից [24, 31.05.1994]: Նման կարգի հայտարարություններ արվեցին նաև հետագայում[1], որոնք, սակայն, Ռուսաստանի անկարողության շնորհիվ մնացին իբրև «ձայն բարբառո հանապատի»: Այսպես, 1994թ. մարտից սեպտեմբեր Բաքվում, Ստամբուլում և Հյուսթոնում տեղի ունեցած չորս ռաունդով բանակցություններից հետո սեպտեմբերի 20-ին ԱՊՆԸ և արտասահմանյան ընկերությունների ԱՄԳԸ կոնսորցիումի միջև ստորագրվեց Ազերի, Չրաղ և Գյունեշլի նավթահանքերի շահագործման վերաբերյալ, այսպես կոչված, «Դարի գործարքը»՝ $7,4 մլրդ ներդրումային ծրագրով, որտեղ գործարկող հանդիսացող «Բրիթիշ Փեթրոլեում» ընկերությունը ստացավ ամենամեծ բաժնեմասը՝ 17,127%:

Ժողովրդավարացման խնդիրը. Հարավկովկասյան հանրապետություններում, առավել ևս Ադրբեջանում ժողովրդավարական վարչակարգի հաստատումը մեծ նշանակություն ունի Մեծ Բրիտանիայի նավթային շահերի տեսանկյունից. ժողովրդավարության առկայությունը բրիտանացիների համար ավելի կանխատեսելի է դարձնում այդ հանրապետությունների որդեգրած քաղաքականությունը նավթի արդյունահանման և տեղափոխման գործընթացի շուրջ: Ժողովրդավարությունը նախևառաջ կոչված է ապահովելու Ադրբեջանի ներքաղաքական կայունությունը, ինչին կանդրադառնանք ստորև: Ժողովրդավարության առկայությունը կարևոր է նաև կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման տեսանկյունից, ինչն էլ շատ կարևոր է օտարերկրյա նավթային ընկերությունների գործունեության տեսանկյունից: Այս խնդիրը մշտապես գտնվել է բրիտանական իշխանությունների ուշադրության կենտրոնում: «Թրանսփերընսի ինթերնեյշնըլ» ընկերության գնահատումներով՝ Ադրբեջանը դասվում է աշխարհի ամենակոռումպաց-

[1] Տե՛ս, օրինակ, «Հայաստանի Հանրապետություն», 11.10.1994. հայտարարություն է արվել ՄԱԿ-ի նյույորքյան կենտրոնակայանում որպես ՄԱԿ-ի ԳԱ փաստաթուղթ տարածված հուշագրում [24, 09.11.1994.]: Հայտարարությունն արվել է ՌԴ էներգետիկայի նախարար Յուրի Շաֆրաննիկի կողմից:

ված պետությունների թվին[1]: Ադրբեջանական մամուլի անհասանելիության պատճառով դժվարանում ենք ցույց տալ թե կոնկրետ ինչ քայլեր են կատարվել բրիտանական իշխանությունների կողմից՝ Ադրբեջանի ժողովրդավարացմանն աջակցելու առումով: Ակնհայտ է, որ անկախացումից ի վեր Ադրբեջանին խորթ է եղել ժողովրդավարությունը, ինչը երևում է այդ երկրում տեղի ունեցող ընտրական գործընթացների, խոսքի ազատության, կոռուպցիոն իրավիճակների վերլուծությունից[2]: Հայտնի է նաև, որ Ադրբեջանը ներկայումս մասնակցում է Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի կողմից 2002թ. առաջ քաշված «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության ապահովման նախաձեռնություն» հակակոռուպցիոն ծրագրին [27]: Նավթը և ժողովրդավարությունը սերտորեն փոխկապակցված են միմյանց. ըստ նավթային քաղաքականության առաջին օրենքի, նավթի գների բարձրացումը հակադարձ համեմատական է նավթարդյունահանող պետությունում ժողովրդավարությանը[3]: Ուստի կարելի է եզրակացնել, որ նավթի գների ներկայումս շարունակվող աճի պայմաններում[4] Ադրբեջանում անձնիշխանությունը դեռ երկար կշարունակի գոյություն ունենալ՝ բրիտանական նավթային ընկերություններին պահելով նյարդային դրության մեջ: Կարելի է, սակայն, պնդել նաև, որ մանավանդ 1990-ականների առաջին կեսին Ադրբեջանում նավթային բիզնես ծավալելու բարենպաստ իրադրության պայմաններում բրիտանական նավթային ընկերությունների համար այդ երկրում ոչ ժողովրդավար վարչակարգի առկայությունը մյուս խնդիրների համեմատ այնքան էլ առաջնահերթ չէր, քանզի այդ ընկերությունները բազմաթիվ անձնիշխանական վարչակարգեր ունեցող երկրներում (Մերձավոր Արևելք, Աֆրիկա) աշխատելու հարուստ կենսափորձ ունեին:

Ներքին կայունության խնդիրը. Ադրբեջանում ներքին կայունության ապահովումն առաջնահերթ նշանակություն ուներ նավթային գործարքների իրականացման տեսանկյունից[5]: Այս խնդիրը նույնպես մեծ նշանակու-

[1] Ընկերության 2005թ. ցուցանիշով 159 երկրների շարքում Ադրբեջանը զբաղեցնում է 137-րդ տեղը (Հայաստանը գտնվում է 88-րդ հորիզոնականում) [25]:

[2] Ըստ *Freedom House* կազմակերպության գնահատումների (որը Հարավային Կովկասում դիտարկումներ է անում 1997 թվականից), 1997թ. ի վեր Ադրբեջանում ժողովրդավարությունը տարեցտարի անկում է ապրում: Մասնավորապես անկում են ապրել ընտրական գործընթացի, դատական համակարգի ցուցանիշները, իսկ կոռուպցիան գրեթե միշտ նույն մակարդակի վրա է մնացել [26]:

[3] Ասվածը հիմնավորվում է նրանով, որ նավթի գների աճման դեպքում մեծանում է նավթ ներմուծող պետությունների (ժողովրդավարությունների) կախվածությունը նավթ արտահանող պետություններից (ոչ ժողովրդավարություններից), և այսպիսով վերջիններիս հնարավոր կամայականություններին դիմակայելն ավելի է դժվարանում [28, p. 122]:

[4] Միջազգային շուկայում անմշակ նավթի մեկ բարելի արժեքը 2006թ. սեպտեմբերի 5-ի դրությամբ կազմել է $69,57 [29]:

[5] Նավթային ընկերությունների շահերի տեսանկյունից տվյալ երկրում անկայունության առկայությունը բացասական նշանակություն ունի տարբեր խմբավորումների միջև նավթային ռեսուրսների յուրացման համար պայքար մղելու իմաստով: Ներքին անկայունությունը համարվում է նավթային քաղաքականության «երեք վտանգներից» մեկը [27]:

թյուն ունի բրիտանական իշխանությունների և գործարար շրջանակների համար: 1990-ականների առաջին կեսը Ադրբեջանի ներքին անկայունության ժամանակաշրջան էր. 1992թ. իշխանափոխությունն ուղեկցվեց բռնություններով. մարտի 5-ին Ադրբեջանի Ժողովրդական ճակատի կողմից պառլամենտի շենքի մոտ կազմակերպված հանրահավաքի մասնակիցները հարձակվեցին իշխանամետ պատգամավորների վրա՝ շատերին պատճառելով մարմնական վնասվածքներ[1]: Ժողճակատի իշխանության ժամանակահատվածը նույնպես աչքի էր ընկնում անկայունությամբ. անհանդուրժողականության դրսևորումներն իշխանության ներսում, զինված բանդաների կամայականությունները, տարբեր խմբավորումների և կլանների միջև զինված բախումները ողջ հանրապետությունով մեկ՝ 1992-93թթ. ադրբեջանական առօրյայի անբաժանելի մասն էին կազմում [8, էջ 93-94]: Ադրբեջանի ներքաղաքական մթնոլորտը շիկացավ հատկապես 1993թ. փետրվար-հունիս ժամանակահատվածում, երբ ադրբեջանական բանակի՝ Լեռնային Ղարաբաղի հյուսիսային շրջանների վրա լայնածավալ հարձակումները ձախողման ենթարկվելուց հետո Էլչիբեյը սկսեց կադրային լուրջ փոփոխություններ կատարել բանակի հրամանատարության շրջանում: Նախագահի և ռազմական գործողությունների պատասխանատվությունը ստանձնած դաշտային հրամանատար Սուրեթ Հուսեյնովի միջև հակամարտությունը հասավ այն աստիճանի, որ վերջինս հունիսին իր զորաբանակով շարժվեց Բաքվի վրա՝ պահանջելով Էլչիբեյի հրաժարականը: Հունիսի 18-ին Էլչիբեյը Բաքվից փախավ Նախիջևան [16, c. 106-115]:

Հ.Ալիևի իշխանության առաջին երկու տարիները նույնպես նշանավորվեցին երկրում ներքին անկայունությամբ: Կրքերը բորբոքվեցին հատկապես Լեռնային Ղարաբաղում զինադադարի հաստատմամբ, ինչի կապակցությամբ շատ ազդեցիկ պետական և քաղաքական գործիչներ (այդ թվում՝ վարչապետ Հուսեյնովը, ոստիկանության հատուկ նշանակության ջոկատի հրամանատար Ջավադովը, նախկին պաշտպանության նախարար Ղազիևը և այլք) Ալիևին սկսեցին մեղադրել դավաճանության մեջ՝ պահանջելով նրա հրաժարականը: Հակամարտությունը հասավ գագաթնակետին 1994թ. հոկտեմբերի սկզբին, երբ Հուսեյնովի ռազմական խմբավորումները Գյանջայում գրավեցին քաղաքային գործադիր իշխանության շենքը և շրջափակեցին օդանավակայանը, իսկ Բաքվում փորձեր կատարվեցին գրավելու հանրապետության գլխավոր դատախազության շենքը [20, 06.10.1994]: Նման դրսևորումները շարունակվեցին գրեթե մինչև 1995թ. կե-

[1] Արդյունքում՝ հաջորդ օրը երեկոյան՝ պառլամենտի նիստին, նախագահ Այազ Մութալիբովը հայտարարեց իր հրաժարականի մասին [16, c. 77]:

սերը[1], որից հետո նախագահ Ալիևին հաջողվեց ամբողջությամբ տիրապետել երկրի ներքին իրավիճակին:

Արևմտյան մամուլում քանիցս հնչեցվեց Ադրբեջանի ներքին անկայունությունը նավթի գործոնով պայմանավորված լինելու համոզմունքը: Կարծիքներ էին շրջանառվում այն մասին, թե Ադրբեջանում խռովության կազմակերպիչներն ուղղորդվում էին Մոսկվայի կողմից (որը դժգոհ էր մնացել «Դարի գործարքով» «Լուկոյլին» բաժին ընկած 10% բաժնեմասի փաստից)՝ նպատակ ունենալով Ադրբեջանում իշխանության գլուխ բարձրացնել այնպիսի անձանց, որոնք կնպաստեին Մոսկվայի դիրքերի ամրապնդմանը երկրի նավթի արդյունահանման և արտահանման ոլորտում [30]: Այս իրադարձությունները, բնականաբար, շատ էին անհանգստացնում բրիտանական իշխանություններին և հատկապես «Բրիթիշ Փեթրոլեումի» ղեկավարությանը, որոնք, մտահոգություն արտահայտելով խռովությունների առթիվ, քանիցս հայտարարեցին, որ դրանք հարցականի տակ են դնում նավթի հանքավայրերի համատեղ մշակման միլիարդավոր ֆունտ ստեռլինգ արժողության համաձայնագրի իրականացումը [31, 05.10.1994]: Ստեղծված պայմաններում բրիտանական իշխանությունները և «Բրիթիշ Փեթրոլեումը» իրենց զորակցությունն ու աջակցությունը հայտնեցին Ադրբեջանի գործող ղեկավարությանը՝ որպես միակ հուսալի երաշխիք՝ ընտրված արտաքին քաղաքական կուրսի պահպանման և, հետևաբար, նավթային գործարքների իրականացման առումով [23, c. 145]: Այս հանգամանքը կարևոր դեր խաղաց Հ.Ալիևի համար՝ իր իշխանությունն ամրապնդելու, հետևաբար և ներքին կայունության հաստատման տեսանկյունից:

Տարածաշրջանային կայունության խնդիրը. Ադրբեջանական նավթի արդյունահանումն ու արտահանումը հավուր պատշաճի իրականացնելու խնդրում առաջնահերթ նշանակություն ունեն տարածաշրջանի խաղաղությունն ու ռազմաքաղաքական կայունությունը, ինչպես նաև տարածաշրջանի պետությունների ներքին կայունությունը: Այս հարցը մշտապես գտնվել է Ադրբեջանում նավթային հետաքրքրություններ ունեցող պետությունների կառավարությունների և քաղաքական շրջանակների ուշադրության կենտրոնում: Այս հարցի առնչությամբ կազմակերպվել են ամենատարբեր մակարդակի բազմաթիվ միջազգային քննարկումներ, որոնցից կարելի է առանձնացնել 1998թ. հունիսի 27-28-ը Բաքվում կայացած Բերգեդորֆյան ֆորումի 113-րդ համաժողովը, որի մասնակից 16 պետությունների

[1] Օրինակ՝ 1995թ. մարտին Ջավադովի գլխավորած ոստիկանության հատուկ նշանակության ջոկատի շուրջ 300 զինյալներ գրավեցին Բաքվի Նիզամու շրջանի ոստիկանության շենքը: Այս և Ղազախ ու Աղստաֆա քաղաքներում ծագած խռովություններն ի վերջո ճնշվեցին [17]:

ներկայացուցիչների քննարկման կիզակետում էր հարավկովկասյան տարածաշրջանում կայունության և խաղաղության խնդիրը՝ կասպյան նավթի և գազի արդյունահանման և արտահանման տեսանկյունից[1]: Միջազգային հարաբերությունների լոնդոնյան թագավորական ինստիտուտի ներկայացուցիչ Ռոյ Էլիսոնը այս առնչությամբ մասնակիցների ուշադրությունն էր հրավիրում ողջ Կովկասում (ներառյալ նաև Հյուսիսային Կովկասը) անվտանգության համալիր միջոցառումների իրականացման անհրաժեշտության վրա [32, c. 51-52]:

Ղարաբաղյան հակամարտության չկարգավորված լինելը, ադրբեջանական իշխանությունների կողմից պարբերաբար հնչեցվող պատերազմի վերսկսման սպառնալիքներն ապակայունացնող ազդեցություն են թողնում տարածաշրջանի իրադրության վրա, վտանգում արևմտյան պետությունների նավթային շահերն այստեղ:

Մեծ Բրիտանիան նույնպես ի սկզբանե ներգրավված է եղել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման դժվարին գործընթացում: Թեև այս պետությունը երբեք չի հանդիսացել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միակ լիազոր միջազգային կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, սակայն այն ազդել և շարունակում է ազդեցություն գործել կարգավորման գործընթացի վրա՝ առաջին հերթին տարածաշրջանում իր նավթային շահերի պաշտպանության պահանջից դրդված: Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատման հարցը կենտրոնական է համարվել ինչպես ադրբեջանա-բրիտանական, այնպես էլ հայ-բրիտանական ամենաառաջին շփումներից սկսած: Այսպես, 1992թ. մարտին ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Գերմանիա այցելած ՀՀ նախագահի քաղաքական վերլուծության գծով խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը հավաստում էր, որ նշված պետությունների պաշտոնատար շրջանակների հետ հանդիպումներում գերիշխող են եղել Լեռնային Ղարաբաղում զինադադարի հաստատման հնարավորության, խաղաղության համաժողովի հրավիրման հարցերը [20, 08.04.1992]: Ինչ վերաբերում է Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ խաղաղության և կայունության ապահովման հարցում Բրիտանիայի դերին և հնարավորություններին, ապա պետք է նկատել, որ վերջինս, ունենալով քաղաքական և տնտեսական մեծ կշիռ աշխարհում և ար-

[1] Ինդուստրիալ երկրների՝ արդյունաբերության ոլորտում համագործակցության, ինչպես նաև այդ համագործակցության ամենատարբեր խոչընդոտների վերացման խնդիրներին նվիրված Բերգեդորֆյան ֆորումի 113-րդ համաժողովի բոլոր մասնակիցները (բրիտանական կողմը ներկայացնում էին *Monument Oil and Gas Ltd.* ընկերության գործադիր տնօրեն Թերի Ադամսը և Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի ներկայացուցիչ Ռոյ Էլիսոնը) իրենց ելույթներում շեշտում էին հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման և կառավարման հրամայականը՝ որպես կասպյան շրջանում էներգետիկ բիզնեսի արդյունավետ իրականացման կարևորագույն երաշխիք [32]:

տաքին ներդրումների առումով լինելով աշխարհի առաջատարներից մեկը, ունակ է լուրջ դերակատարում ունենալ այս հարցում՝ իր նպաստը բերելով հարավկովկասյան տարածաշրջանային համագործակցության հաստատմանը: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը 1999թ. մայիսի 10-11-ը Հայաստան այցելած Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի արտաքին հարցերի կոմիտեի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ հենց այս կերպ է դիտարկել բրիտանական խաղաղարար ներգրավվածության հնարավորությունը [33]: Թեև Բրիտանիայի նավթային քաղաքականությունը Ղարաբաղյան հակամարտության շուրջ խաղաղություն հաստատելու առումով ոչ միանշանակ է ընդունվել և հաճախ համարվել է նաև ապակայունացնող գործոն[1], այդուհանդերձ, հակված ենք կարծելու, որ այնքանով, որքանով մեր տարածաշրջանում Մեծ Բրիտանիան միլիարդավոր դոլարների ներդրումներ է արել, հետևաբար այդ պետությունը հետևողական պետք է լինի և նույնպես ներդրում ունենա տարածաշրջանի կայունության և խաղաղության ձեռքբերման գործում: Այս առումով Մեծ Բրիտանիայի ցուցաբերած քաղաքական կամքն ու ակտիվ դիվանագիտական գործունեությունը հստակ երևացել է դեռ Ղարաբաղյան հակամարտության թեժ շրջանում՝ 1991-94թթ.: Կոնկրետ օրինակներով հիմնավորենք ասվածը:

Ռազմական գործողությունների դադարեցումը և խնդրի խաղաղ կարգավորումը միշտ գտնվել են հայ-բրիտանական և բրիտանա-ադրբեջանական երկկողմ պաշտոնական շփումների կիզակետում: ԵԱՀԽ շրջանակներում Մինսկի խմբի ստեղծման առաջարկը կայացրել է հենց Մեծ Բրիտանիան [18]: Վերջինս իր աջակցությունն է հայտնել Ղարաբաղյան հակամարտության թեժ շրջանում ռազմական գործողությունների դադարեցմանն ուղղված ԵԱՀԽ Մինսկի խմբի նախատեսած քայլերին: Մեծ Բրիտանիան հիմնախնդրի կարգավորման հարցում շահագրգիռ արևմտյան այն եզակի պետությունն էր, որ ողջունում էր ռուսական խաղաղապահ զորքերի՝ ղարաբաղյան և ադրբեջանական ուժերի բաժանարար գծում տեղակայելու ռուսական առաջարկը՝ ընդգծելով, որ ռուսական խաղաղապահ ուժերի Ղարաբաղ մուտք գործելը ռազմական գործողությունների դադարեցման միակ ռեալ հնարավորությունն է: Այդ մասին 1993թ. հոկտեմբերին ՀՀ իշխանություններին պաշտոնապես հայտարարել է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի փոխնախարար Դուգլաս Հոգը [18]: Նույն հարցի շուրջ բրիտանական կողմի ցուցաբերած աջակցության մասին է հավաստել նաև Մեծ Բրիտանիայի կառավարության հրավերով 1993թ. մայիսի 26-29-ը Լոնդոնում գտնվող ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված արտգործնա-

[1] Ղարաբաղյան հարցում խաղաղության և կայունության հաստատման վրա բրիտանական նավթային քաղաքականության գործած ազդեցության վերաբերյալ նախատեսվում է առանձին հետազոտություն:

խարար Վահան Փափազյանը [20, 03.06.1993]:

Մեծ Բրիտանիան 1993թ. աշնանը բավականին ջանքեր գործադրեց՝ անդամակցելու ԵԱՀԽ Մինսկի խմբին, ինչը, սակայն, չհաջողվեց մասնավորապես հայկական կողմի ընդդիմության պատճառով: Այդուհանդերձ, ասվածը վկայում է խնդրի խաղաղ կարգավորման և հատկապես ռազմական գործողությունների դադարեցման հարցում Մեծ Բրիտանիայի իրական շահագրգռության մասին: ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպան Բրայան Ֆոլը Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած առանձնազրույցում հայտնել է, որ բրիտանացի դիվանագետները աշխատանք են տարել Ադրբեջանում պատերազմի կողմնակից ուժերին տարհամոզելու, ինչպես նաև Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը վերացնելու ուղղությամբ [34]: Մեծ Բրիտանիան նաև պատրաստակամ էր 1994թ. աշնանը Լեռնային Ղարաբաղ խաղաղապահ ուժեր ուղարկելու հարցում: ԵԱՀԽ Նախնական գործողությունների ծրագրման խմբում (ՆԳԾԽ) Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Պատրիկ Օ'Քոնելը Ավստրիայում ՀՀ դեսպանության աշխատակցին վստահեցրել է, որ իր կառավարությունը Ղարաբաղյան խնդիրը պահում է ամենօրյա ուշադրության կենտրոնում և հստակ փաստաթղթի ներկայացման դեպքում, անկասկած, կմասնակցի խաղաղապահպանությանը՝ տրամադրելով «աշխարհի լավագույն բանակներից մեկի գումարտակներից մեկը» [35]:

Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատման, հիմնախնդրի կարգավորման հարցում Բրիտանիայի առավելագույնս օբյեկտիվ և ակտիվ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի շրջափակումը վերացնելու պահանջով Ադրբեջանի և Թուրքիայի իշխանությունների վրա Բրիտանիայի կողմից ճնշման գործադրման հարցը քանիցս բարձրացվել է բրիտանական իշխանությունների շրջանում: Այս առնչությամբ զգալի աշխատանքներ է տարել, մասնավորապես, Բրիտանիայի խորհրդարանի բրիտանա-հայկական պատգամավորական խումբը: Վերջինս մի քանի քննարկումներ է կազմակերպել Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատում՝ նվիրված Ղարաբաղյան հիմնահարցի տարբեր կողմերին և հիմնահարցի կապակցությամբ բրիտանական դիրքորոշմանը. այս ձեռնարկումները դրական ազդեցություն են թողել հիմնախնդրի վերաբերյալ բրիտանական իշխանությունների առավել օբյեկտիվ տեսակետի ձևավորման վրա:

Եզրակացություն

Հարավային Կովկասում տարածաշրջանային քաղաքականություն վարել կարող են սահմանափակ թվով պետություններ. դրանք այն պետություններն են, որոնց շահերն առնչվում են Հարավային Կովկասի տարածաշրջա-

նային քաղաքական խնդիրներին, հարավկովկասյան ճանաչված և չճանաչված պետությունների միջև բարդ հարաբերություններին, տարածաշրջանի աշխարհագրական դիրքին և այլն: Այսպիսով, Մեծ Բրիտանիայի՝ Հարավային Կովկասում ներգրավման նպատակն ադրբեջանական նավթի լայնածավալ արդյունահանման և հետագա տեղափոխման ծրագրերի իրականացումն էր: Բրիտանական նավթային հետաքրքրությունները Հարավային Կովկասում ձևավորվեցին այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ այդ շահերի կենսագործման համար առկա էին թե՛ դրական (ԽՍՀՄ փլուզում և հարավկովկասյան հանրապետությունների անկախացում, նոր նավթահանքերի բացում, ներդրումային նոր հնարավորություններ և այլն), թե՛ բացասական (տարածաշրջանում պատերազմական իրադրություն, երկրների քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակ Վրաստանի և Ադրբեջանի ներքին անկայունություն և այլն) պայմաններ: Բրիտանական նավթային ընկերությունների ամուր դիրքերի հաստատումը և նավթային գործարքների հետագա իրականացումն ադրբեջանական նավթահանքերի շահագործման ոլորտում բրիտանական իշխանություններից պահանջում էին քաղաքական և տնտեսական աջակցություն Ադրբեջանին այնպիսի խնդիրներում, ինչպիսիք էին այդ երկրի անկախության ամրապնդումը, Կասպիցի իրավավիճակը, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, կառուցվելիք նավթամուղի ուղղությունը, Ադրբեջանի սոցիալ-տնտեսական իրավիճակը[1] և այլն: Իսկ անմիջապես բրիտանացիների տեսանկյունից այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր ապահովել Հարավային Կովկասի անկախությունը Ռուսաստանից (նավթի արդյունահանումն ու տեղափոխումը Ռուսաստանի կողմից միանձնյա վերահսկելը թույլ չտալու առումով), օժանդակել Ադրբեջանում ներքին կայունության հաստատմանը (հնարավոր հեղաշրջումների հետևանքով նավթային գործարքներից դուրս չմնալու առումով), օժանդակել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը (նավթի տեղափոխումն ապահով իրականացնելու առումով) և այլն:

Հոկտեմբեր, 2006թ.

[1] Հատկանշական է, որ Բաքվում բրիտանական նավթային ընկերությունների գործունեությունը բրիտանացիների կողմից շեշտադրվում էր Ադրբեջանի տնտեսության վերականգնման, զարգացման, սոցիալական իրավիճակի բարելավման կարգախոսներով. բրիտանական իշխանությունները հաճախ են շեշտել Ադրբեջանին տնտեսապես օգնելու իրենց պատրաստակամությունը՝ հաճախ տպավորություն ստեղծելով, որ բրիտանական ընկերությունների գործունեության թիվ մեկ նպատակը Ադրբեջանին օգնելն է: Այսպես, օրինակ՝ Մեծ Բրիտանիայի առևտրի պալատի նախագահ Մայքլ Հեզելթայնը Բաքվում «Բրիթիշ Փեթրոլեում»-ի գրասենյակի բացման արարողության ժամանակ արտաբերել է հետևյալ խոսքերը. «Կցանկանայի, որ Միացյալ Թագավորությունն առաջնային դերակատարություն ունենա ադրբեջանական տնտեսության զարգացմանն աջակցելու գործում» [31, 06.10.1992]:

Աղբյուրներ և գրականություն

1. *Юданов Ю.,* Закавказье: оценки инвестиционной привлекательности//Мировая экономика и международные отношения, №11, 1999.
2. Россия и Закавказье: Реалии независимости и новое партнерство, Москва, 2000.
3. «Эксперт», 23.11.1998.
4. «Известия», 08.10.1993.
5. «НГ – Содружество», ноябрь 1998.
6. ԱՄՆ Էներգիայի տեղեկատվության վարչության պաշտոնական վեբկայք www.eia.doe.gov/emeu/cabs/Azerbaijan/Full.html
7. Nasser Sagheb and Masoud Javadi, Azerbaijan's "Contract of the Century" Finally Signed with Western Oil Consortium // Azerbaijan International, Socar Section, Winter 1994 (2.4), http://www.azer.com/aiweb/categories/magazine/24_folder/24_articles/24_aioc.html
8. *Anne Kressler,* «Trailblazer in Pursuit of Oil: The Re-Opening of Azerbaijan to the West» // Azerbaijan International, Socar Section, Winter 1994 (2.4), http://www.azer.com/aiweb/categories/magazine/24_folder/24_articles/24_remp.html
9. Chronology of AIOC Oil Contract//Azerbaijan International, Socar Section, Winter 1994 (2.4), http://www.azer.com/aiweb/categories/magazine/24_folder/24_articles/24_oilchronology.html
10. Մեծ Բրիտանիայի ԱԳՆ պաշտոնական վեբկայք www.fco.gov.uk/servlet/Front?pagename=OpenMarket/Xcelerate/ShowPage&c=Page&cid=1067967903739#Top
11. *Терентьев А.,* Торийская внешняя политика Тони Блэра // Мировая экономика и международные отношения, №9, 2005.
12. Enayatollah Yazdani, Competition over the Caspian oil routes: Oilers and Gamers perspective//Alternatives: Turkish journal of International Relations, volume 5, №1&2, Spring&Summer 2006.
13. *Jean-Christophe Peuch,* Caspian Sea Oil: The Role Of Private Corporations// The Fletcher Forum Of World Affairs, volume 22, №2, Summer – Fall 1998.
14. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 2, գործ 51, էջ 164:
15. *Պետրոսյան Ս.,* Նավթը և քաղաքականությունը, «Ազգ», 26.03.1994:
16. *Чернявский С.И.,* Новый путь Азербайджана, Москва, 2002.
17. «Հայաստան», 18.03.1995:
18. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 1, գործ 173, էջ 192:
19. *Манасян А.,* Карабахский конфликт: ключевые понятия и хроника (Раздел 2. Военно-политическая хроника конфликта), Ереван, 2005.
20. «Հայաստանի Հանրապետություն»:
21. LUKOIL signes agreement to sell its interest in the Azeri-Chirag-Gunashli project to INPEX. www.capitallinkrussia.com/press/companies/50010142/19136.html
22. *Cohen A.,* The New Great Game: Pipeline politics in Eurasia//Eurasia Studies. Ankara, Vol. 3, №1, 1996.
23. *Чернявский С.И.,* Кавказская стратегия Вашингтона // Международная жизнь, №1, 1999.

24. «Financial Times».
25. http://www.transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2005
26. www.freedomhouse.hu/nitransit/2006/azerbaijan2006.pdf
27. «The Economist» (Europe), August 17-23, 2006.
28. *Thomas L. Friedman,* The first law of Petrolpolitics // Foreign policy, issue 154, May-June 2006.
29. www.oil-price.net/index.php?lang= en
30. «The Washington Post», 03.11.1994.
31. «The Times».
32. Энергетика и геостратегия в Каспийском регионе – участники, интересы, возможности конфликтов. 113-я конференция Бергедорфского форума, Баку, Азербайджан, 1998 год//Международная жизнь № 4, 1999.
33. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 5, գործ 16, էջ 106:
34. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 2, գործ 52, էջ 126:
35. ՀՀ ԱԳՆ պատմաղիվանագիտական արխիվ, ցուցակ 1, գործ 19, էջ 149-150:

НЕФТЯНАЯ ПОЛИТИКА ВЕЛИКОБРИТАНИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ

Менуа Согомонян

Резюме

Учитывая роль Великобритании в международных отношениях (как постоянного члена Совета Безопасности ООН, как ядерной державы, владеющей огромной военной и экономической мощью, и как государства, являющегося одним из самых крупных инвесторов в мире), представляет особый интерес и ее политика на Южном Кавказе, которая в основном преследует реализацию ее нефтяных интересов – добычу и транспортировку азербайджанской нефти.

В статье представлены основы нефтяной политики Великобритании на Южном Кавказе. Период первой половины 1990-х гг. ознаменовался становлением британских нефтяных интересов на Южном Кавказе. Учитывая ряд событий и обстоятельств (военно-политическая и геополитическая ситуация на Южном Кавказе, внутреняя ситуация в южнокавказских государст-

вах и т.д.), присущих указанному периоду, целью этой политики являлось укрепление позиций британских нефтяных компаний в сфере эксплуатации азербайджанских нефтяных месторождений. После этого Великобритания стремилась сохранить позиции своих нефтяных компаний и обеспечить безопасность процесса добычи и транспортировки нефти. В статье рассматриваются процесс формирования этих интересов, основные принципы данной политики – основанное на принципе «специальных отношений с США» согласовывание британской государственной политики с экономической деятельностью британских нефтяных компаний, а также основные задачи на пути реализации вышеобозначенной цели: противостояние политике России, направленной на гегемонное (одностороннее) контролирование процесса добычи и транспортировки азербайджанской нефти, содействие становлению демократического режима и внутренней стабильности в южнокавказских государствах, а также содействие стабилизации военно-политической ситуации и становлению мира в регионе в целом. Особое внимание уделяется задачам, связанным с Азербайджаном, так как эта страна обладает большими запасами нефти и в связи с этим приобретает ключевое значение в нефтяной политике Великобритании.